ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 15.06.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 63/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի 27.05.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-63/16 բողոք) և կից փաստաթղթերը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 02.06.2016թ. գրությունը և կից փաստաթղթերը, «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) և ԳԲԽ-63/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 13.06.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 27.05.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բջջային հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման նպատակով «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի գնման առարկա է հանդիսացել Պատվիրատուի կարիքների համար բջջային հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերումը, որը խմբավորված է 1 չափաբաժնի մեջ՝ բջջային հեռախոսակապի ծառայություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.05.2016թ. ընթացակարգի հայտերի բացման նիստում մերժել է Ընկերության ներկայացված հայտը և առաջին տեղ զբաղեցնող է ճանաչել ընթացակարգի մյուս մասնակցին՝ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին: Շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգով պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ 2016թ. մայիսի 25-ին Հանձանաժողովի կողմից հաստատվել է ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն գտնում է, որ Հանձնաժողովի կայացրած որոշումներն անհիմն են և չեն բխում օրենքի պահանջներից:

Ընկերությունը, որպես բողոքի առարկայի համար էական նշանակություն ունեցող փաստեր, նշել է հետևյալը.

✓ 10.05.2016թ.-ին Ընկերությունը Պատվիրատուից ստացել է Ընթացակարգին մասնակցելու հրավեր: 18.05.2016թ. Ընկերությունը հրավերով սահմանված կարգով և ժամկետով ներկայացրել է հայտն էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով:

✓ Ընկերությունից բացի, Ընթացակարգին մասնակցում է նաև «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն:

✓ Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնի առաջարկներ.

Ընկերության կողմից առաջարկված ընդհանուր գինը կազմում է 157 500 /հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ,

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից առաջարկված ընդհանուր գինը կազմում է 3 300 000 /երեք միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Ընկերության կողմից ներկայացված առաջարկված ընդհանուր գինը զգալիորեն պակաս է «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից առաջարկված գնից:

✓ Հանձնաժողովն ուսումնասիրել է Ընկերության գնի առաջարկը և առանց հետագա ուսումնասիրման և պարզաբանման՝ որոշում է ընդունել մերժել Ընկերության առաջարկը՝ պատճառաբանելով (Ընկերությունը մեջբերել է), որ «Գնային առաջարկում տառերով գրվածը չի համապատասխանում թվերի թվաբանական գումարին, ինչպես նաև գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին՝ գնային առաջարկը մեկ թվով ներկայացնելուց բացի ներկայացվել են նաև հավելյալ ծառայությունների դիմաց գումար գանձելու սակագները:»):

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն որպես բողոքի փաստացի և իրավական հիմքեր նշել է հետևյալը.

Ընկերությունը իր գնային առաջարկում, հրավերի պահանջներին համապատասխան, ներկայացրել է առաջարկված ընդհանուր գինը՝ տառերով և թվերով: Հանձնաժողովը, ուսունասիրելով Ընկերության առաջարկը, եզրահանգել է, որ Ընկեության առաջարկում տառերով գրվածը չի համապատասխանում թվերի թվաբանական գումարին: Ընկերությանը պարզ չէ, թե ինչու Հանձնաժողովը եկավ այդ եզրակացությանը, քանի որ թվանշանակարգի տարանջատումը ստորակետով ընդունված է գործարար պրակտիկայում: Այնուամենայնիվ, եթե Հանձանաժողովը որակավորում է դա որպես անհապամատասխանություն, ապա այն պետք է ղեկավարվեր ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան դրույթով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգի) 44-րդ կետի երրորդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Հանձնաժողովը, թվանշանակարգում ստորակետի առկայությանը որակավորելով որպես անհամապատասխանություն, այնուամենայնիվ, որպես հիմք չի ընդունել մեկ թվով արտահայտված տառերով գրված գումարը:

Ըստ Ընկերության՝ Հանձնաժողովը իր որոշման մեջ հանգել է եզրակացության, որ Ընկերության հայտը մերժելու բավարար հիմք է հանդիսանում գնի առաջարկում տառերով գրվածի և թվերի թվաբանական գումարի վիճելի անհամապատասխանությունը:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն նշել է նաև, որ Ընթացակարգով պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունում Հանձնաժողովը նշել է ևս մեկ հիմք, որը բացակայել է 19.05.2016թ. արձանագրությունում: Ըստ Հանձնաժողովի՝ գնային առաջարկը մեկ թվով ներկայացնելուց բացի, Ընկերության կողմից ներկայացվել են նաև հավելյալ ծառայությունների դիմաց գումար գանձելու սակագները, այսինքն ստացվում է, որ Հանձնաժողովը ինքն է հաստատել, որ Ընկերության գնային առաջարկը ներկայացվել է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով, այլ կերպ ասած, հաստատել է այն փաստը, որ Ընկերության առաջարկը ներկայացվել է՝ Պատվիրատուի ընթացակարգի հրավերի Մաս II 4-րդ կետի 4.2. ենթակետի համաձայն:

Ըստ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի՝ Հանձնաժողովը, հաստատելով Ընկերության կողմից հրավերով սահմանված պահաջների կատարումը, այնուամենայնիվ, մերժել է այն՝ սրանով իսկ ցուցաբերելով տվյալ հարցին անհարկի ձևական մոտեցում:

Օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն նշել է, որ Հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակիցների հայտերը, պետք է նկատի ունենալով մասնակիցների գնային առաջարկների միջև նշանակալի տարբերության փաստը, հաշվի առներ Օրենքի վերը նշված դրույթը և, պետության շահերից ելնելով, ըստ էության, վերլուծեր Ընկերության առաջարկը և բավարար գնահատեր այն:

Ըստ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի՝ Հանձնաժողովը չի կատարել Օրենքի 31-րդ հոդվածի և Կարգի 44-րդ կետի երրորդ ենթակետի պահանջները՝ չի առաջնորդվել վերը նշված դրույթներով և չի իրականացրել Օրենքով և Կարգով սահմանված գործողությունները: Հանձնաժողովը նաև ի հաճույս ձևական կողմի պահպանմանը, պատշաճ կարևորություն չտալով գնումների տնտեսող և արդյունավետ իրականացման սկզբունքին, չի կատարել

Օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասով սահմանված պահանջները, ինչի արդյունքում հանգել է սխալ եզրակացության և կայացրել սխալ որոշում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 45-րդ հոդվածի պահանջով՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն խնդրել է.

1. Դադարեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «ԱրմեՏել» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին առաջին տեղը զբաղեցնող ճանաչելու մասին որոշումները:

2. Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

2. <u>ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 02.06.2016թ. գրությամբ ներկայացրել է «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայ-նագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ, վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ 19.05.2016թ կազմակերպված «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ կետի, հիմք է ընդունել «ԱրմենՏել» ՓԲԸ-ի գնային առաջարկում նշված տառերով գրվածը /հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ/ և առաջնորդվելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված պարզաբանմամբ, հաշվի առնելով, որ գնային առաջարկում ներկայացված ինքնարժեքի, շահույթի և ԱԱՀ-ի թվաբանական գումարը /108,413 ՀՀ դրամ + 22,837 ՀՀ դրամ + 26,250 ՀՀ դրամ = 157,500 ՀՀ դրամ/ չի

համապատասխանում տառերով գրվածին, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, որ գնային առաջարկը ենթակա չէ շտկման՝ մերժել է վերջինիս հայտը:

Պատվիրատուն նշել է, որ թվանշանակարգի տարանջատումը ստորակետով ընդունված է գործարար պրակտիկայում, հանձնաժողովը հայտի գնային առաջարկը գնահատելիս առաջնորդվել է նույն տրամաբանությամբ՝ 157,500 ՀՀ դրամը ընդունել է որպես հարյուր հիսունյոթ դրամ 50 լումա, իսկ հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր դրամ ընդունելու համար այն պետք է ներկայացվեր 157500,0 ՀՀ դրամ կամ 157,500 հազ. դրամ: Ի դեպ, բողոքում մասնակիցը իր հայտով առաջարկած գինը նշել է ճիշտ ձևով /157500 ՀՀ դրամ/, այլ ոչ թե այնպես ինչպես հայտում /157,500 ՀՀ դրամ/:

Պատվիրատուն նշել է նաև, որ Ընկերության հայտը մերժվել է նաև այն պատճառով, որ գնային առաջարկը մեկ թվով ներկայացնելուց բացի, ներկայացվել են նաև հավելյալ ծառայությունների դիմաց գումար գանձելու սակագները, այն դեպքում, երբ նշված ծառայությունները ներառված են եղել հրավերի պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագիր հավելվածում և գնային առաջարկը ներկայացնելիս դրանք պետք է արդեն իսկ ներառված լինեին մեկ թվի մեջ, այլ ոչ թե առանձին՝ որպես միավորի գին: Այսինքն, Պատվիրատուն եզրակացրել է, որ մասնակցի ներկայացրած գինը վերջնական չէ՝ այն կարող է աճել պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ընթացքում և անկանխատեսելի չափով: Իսկ այն, որ արձանագրված «**գնային առաջարկը մեկ թվով ներկայացնելուց բացի** ներկայացվել են նաև հավելյալ ծառայությունների դիմաց գումար գանձելու սակագները» արտահայտությամբ հաստատվել է մասնակցի մեկ թվով ներկայացնելու փաստը ճիշտ չի ընկալվել վերջինիս կողմից, քանի որ առկա է **«բացի»** բառը, որը հակառակը՝ ժխտում է մեկ թվով ներկայացնելու փաստը:

Ինչ վերաբերում է 19.05.2016թ. կազմված բացման նիստի արձանագրությունում հայտի մերժման երկրորդ հիմքի բացակայությանը, ապա այն նշված է եղել, սակայն Excell տարբերակով կազմված արձանագրության մեջ նշված տողը ամբողջական բացված չի եղել, որը շտկվել է և կրկին տեղադրվել է www.gnumner.am կայքում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հավաստել է, որ «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կայացրած որոշման վերաբերյալ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է, քանի որ վերջինում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների վերաբերյալ նշված խախտումները բացակայում են:

3. ԳԲԽ-63/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 13.06.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «ԱրմեՏել» ՓԲԸ-ի 27.05.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-63/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-63/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար հեռախոսակապի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԱրմենՏել» ՓԲԸ-ն և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի Հրավերի Հավելված N 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված է, որ գնման առարկա են հանդիսանում բջջային հեռախոսակապի ծառայությունները.

Չափաբաժին	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	Բջջային հեռախոսակապի ծառայություններ	Բջջային հեռախոսակապի տրամադրում 3 հեռախոսահամարների համար:

		Յուրաքանչյուր հեռախոսահամարի համար բջջային կապի ծառայությունը իր մեջ ներառում է տվյալ ցանցում /ներցանցային/ առնվազն 7500 րոպե ամսական անվճար խոսելաժամանակ, առնվազն 350 րոպե այլ ցանցեր անվճար խոսելաժամանակ /այլ ցանցերը իր մեջ ներառում է նաև ԱՄՆ, ՌԴ, Կանադա և Լեռնային Ղարաբաղի հանրապետություն/, 250 անվճար կարճ /sms/ հաղորդագրություններ ՀՀ բոլոր բջջային ցանցերին և առնվազն 10 000 մեգաբայթ անվճար ինտերնետ: Ռոմինգային գոտիներում կապի որակյալ և անխափան ապահովում: Վճարումը – հետվճարային տարբերակում
Ծառայության մատուցման ժամկետը		
Սկիզբը		Ավարտը
Պայմանագրի կնքման օր		2016թ.-ի դեկտեմբեր

3. Հրավերի 2-րդ մասի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 4.2-րդ կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:

4. Հրավերի N 4 հավելված գնային առաջարկի օրինակելի ձևն է.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				

5. «ԱրմենՏել» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկով նշել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայ-նագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով՝

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	«Բջջային հեռախոսակապի ծառայություններ N1»	108,413	22,837	26,250	157,500 (հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր)

Հաշվարկը ներկայացված է 3 հեռախոսահամարի համար՝ համաձայն հրավերում առկա մատուցվելիք ծառայությունների քանակական ցուցանիշների /մինչև դեկտեմբեր 2016թ. ներառյալ ժամանակահատվածի համար/: Յուրաքանչյուր հավելյալ ծառայությունների համար գումարը գանձվելու է՝ համաձայն ցանկում ներկայացված սակագների: Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր հեռախոսահամարի համար անհատական լրացուցիչ ձայնային և ինտերնետ փաթեթների և ծառայությունների ակտիվացման հնարավորություն:

Ցանկ

Հիմնական ծառայությունները	**Չափման միավոր**	**Գինը (ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ)**
Ելքային զանգեր փակ խմբի անդամների միջև	րոպե	0
զանգեր ցանցի ներսում	րոպե	5
զանգեր դեպի այլ տեղական բջջային ցանցեր	րոպե	20
զանգեր Հայաստանի ֆիքսված ցանցեր	րոպե	20
SMS ցանցի ներսում	հատ	5
SMS դեպի այլ տեղական բջջային ցանցեր	հատ	10
միջազգային SMS	հատ	20
շարժական ինտերնետ	ՄԲ	5

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. մայիսի 19-ին կայացած նիստի արձանագրության.

- 4.1 կետի համաձայն՝ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի՝ որի գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ գնային առաջարկով ներկայացված թվերի թվաբանական գումարը չի համապատասխանում տառերով գրված թվին: «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում, գնից բացի, առկա են նաև հավելյալ ծառայությունների դիմաց գումար գանձելու սակագները:
- 5.2 կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացվել է որոշում, համաձայն որի «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը մերժվել է՝ հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Օրենքի 31-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 35-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա ***մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:***

Կարգի 44-րդ կետի՝

• 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են ***հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը*** կամ հայտի ապահովումը.

• 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Հրավերի 7.2.1 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի 2-րդ մասի՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 4.2 կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է ***գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով:***

Տվյալ դեպքում, Խորհուրդը արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը՝ Ընկերության գնային առաջարկը հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու՝ գնային առաջարկի ընդհանրական բաղադրիչների թվաբանական գումարը տառերով գրված թվին չհամապատասխանելու, և գնային առաջարկը մեկ թվով ներկայացնելուց բացի հավելյալ ծառայությունների դիմաց գումար գանձելու սակագների առկայության հիմքով, խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Հրավերով սահմանված պահանջները, քանի

որ Ընթացակարգի Հրավերով նախատեսվել է գնային առաջարկը ներկայացնել մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով, ինչը կատարվել է Ընկերության կողմից, այսինքն՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկով նշել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով՝

Չափա-բաժինների համարները	Ծառայության անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ*	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	«Բջջային հեռախոսակապի ծառայություններ N1»	108,413	22,837	26,250	157,500 (հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր)

Բացի այդ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, որպես հավելյալ տեղեկություն, գնային առաջարկում նշել է հետևյալը՝

Հաշվարկը ներկայացված է 3 հեռախոսահամարի համար՝ համաձայն հրավերում առկա մատուցվելիք ծառայությունների քանակական ցուցանիշների /մինչև դեկտեմբեր 2016թ. ներառյալ ժամանակահատվածի համար/: Յուրաքանչյուր հավելյալ ծառայությունների համար գումարը գանձվելու է՝ համաձայն ցանկում ներկայացված սակագների: Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր հեռախոսահամարի համար անհատական լրացուցիչ ձայնային և ինտերնետ փաթեթների և ծառայությունների ակտիվացման հնարավորություն:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որ թվանշանակարգի տարանջատումը ստորակետով ընդունված է գործարար պրակտիկայում և Հանձնաժողովը հայտի գնային առաջարկը գնահատելիս՝ առաջնորդվել է նույն տրամաբանությամբ՝ 157,500 ՀՀ դրամը, ընդունել է որպես հարյուր հիսունյոթ դրամ 50 լումա, իսկ հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր դրամ ընդունելու համար այն պետք է

ներկայացվեր 157500,0 ՀՀ դրամ կամ 157,500 հազ. դրամ, ապա Խորհուրդը հայտնում է, որ նման թվանշանակարգ նախատեսված և սահմանված չէ որևէ իրավական ակտով, ինչպես նաև օրենսդրորեն կարգավորված չէ «,» նշանի կիրառման առանձնահատուկ կարգը:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկում ձևակերպված թվաբանական հաշվարկը ճիշտ է և «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հայտը մերժելու հիմք հանդիսանալ չէր կարող:

Իսկ, ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդմանը, որ Ընկերության հայտը մերժվել է նաև այն հիմքով, որ Ընկերության գնային առաջարկը չի ներառել Հրավերի պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունները, ապա Խորհուրդը գտնում է, որ անհիմն է, քանի որ Ընկերության գնային առաջարկում հստակ նշվել է, որ տվյալ հաշվարկը ներկայացված է 3 հեռախոսահամարի համար՝ ***համաձայն հրավերում առկա մատուցվելիք ծառայությունների քանակական ցուցանիշների /մինչև դեկտեմբեր 2016թ. ներառյալ ժամանակահատվածի համար/,*** ինչը և պնդել է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի ներկայացուցիչը 02.06.2016թ. և 15.06.2016թ. տեղի ունեցած ԳԲԽ-63/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստերին:

Բացի այդ, եթե Պատվիրատուին, բացի Հրավերի տեխնիկական բնութագրում նշված ծառայություններից, անհրաժեշտ են նաև հավելյալ ծառայություններ, որոնց դիմաց վճարումները ևս պետք է ներառված լինեին ներկայացված գնային առաջարկում, նշանակում է, որ Պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագիրը պետք է ներառեր նաև այդ հավելյալ ծառայությունների քանակական ցուցանիշները՝ հնարավորություն տալով մասնակիցներին ներկայացնել այնպիսի գնային առաջարկ, որը կհամապատասխաներ և Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին և Պատվիրատուի իրական կարիքին:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտը համապատասխանում է Հրավերով սահմանված պահանջներին, իսկ թե Հրավերով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը համարժեք է, թե ոչ Պատվիրատուի այն կարիքին, որի բավարարման նպատակով կազմակերպվել է տվյալ գնման գործընթացը, ապա դրա համար պատասխանատվություն կարող է կրել Պատվիրատուն, այլ ոչ թե Ընկերությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի 27.05.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից «ՀՀԿԳՆՇՀԾՁԲ-15/25-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. մայիսի 19-ին կայացված՝ «ԱրմեՏել» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Անդամներ՝ Նարինե Նիկոլայան

Արթուր Բաղդասարյան